

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2014թ. հուլիսի 7-11-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը և ՀՀ ԱՎԾ արդյունաբերության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Էներգետիկայի վիճակագրություն և էներգետիկ հաշվեկշիռ» թեմայով ուսումնական այցելությանը,
- ✓ 2014թ. հուլիսի 10-11ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Բուդապոն (Մոնտենեգրո) կայացած «Ռազմավարական կառավարումը որակի շրջանակներում» խորագրով սեմինարին,
- ✓ 2014թ. հուլիսի 29-ից – օգոստոսի 1-ը ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել է ք. Տուրկուում (Ֆինլանդիա) կայացած ««Ժամանակի օգտագործում» հետազոտության տվյալների հիման վրա «Տնային տնտեսության արտադրության ծավալների հաշվարկ»» խորագրով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2014թ. օգոստոսի 17-29-ը ՀՀ ԱՎԾ ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն» խորագրով դասընթացին,
- ✓ 2014թ. օգոստոսի 26-31-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թայլանդ) կայացած «Ամբողջական վիճակագրական պատկերի ստացում» խորագրով Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրներում քաղաքացիական կացության գրանցումների և բնական շարժի վիճակագրության հարցերով նախարարական համաժողովի տարածաշրջանային նախապատրաստական հանդիպմանը,